

անբարոյական միջոցներ գործադրելու համար կարելի է մեղադրել կառավարութեանը և նրա գործակառարներին, այնպէս որ ներքեւ:

այս անգամ իշխան Բիսմարկ ոչ թէ իր հակակործնական պէտք է գանգատէր, այլ իր կողմնակիցներին:

Post² լրագրի յայտնի յօդուածի տեղովեց առաջ Բիսմարկի մէջ լուր տարածվեցաւ, որ իշխան Բիսմարկ հրաժարական է տուել, բայց ոչ զիպլոմատիական շրջաններէ մէջ, ոչ միացեալ խորհուրդը և ոչ բոլորսայի վրա այդ մասին տեղեկութիւն չուներ: Պետական կանցլերը պատրաստուած էր Բիսմարկի գալ, բայց յետոյ հեռագրեց, որ հրաժարվել է իր դիտաւորութիւնից: Կրկնապէս Բիսմարկի հետեւեցնելը ընտրողական 100 շրջաններէ մէջ արդէն յայտնի են: Գրանց մէջ ոչ մի պահանջողական չընտրվեցաւ: Նրանք ընդհակառակը մի քանի տեղեր կորցրին, որոնց վրա առաջ յոյս ունէին: «Գերմանական ժողովրդական միութեան» ընտրողական ժողովի ժամանակ, հակասեմիտներ յայտնի առաջնորդ Ֆէօրստերի նախագահութեամբ մի ուղերձ ընդունվեցաւ իշխան Բիսմարկի համար, որ քաջաբերում է վերջինին մաքառել առաջադէմների դէմ: Բիսմարկի հետեւալ հեռագրով պատասխանեց Ֆէօրստերին. «Նորահայտ եմ ձեր համակրութեան և օգնութեան համար այն կուր մէջ, որ կատարվում է կայսրի և երկրի պաշտպանութեան համար: Ես ձեզ հետ համոզված եմ, որ վերջը մենք յաղթող կը հանդիսանանք»:

Գրանց երեւում է, որ Բիսմարկը խրախուսում է այն ընկերութեանը, որի նշանաբանն է հրեաներին հալածելը:

ԱՆԳԼԻԱ

Լոնդոնում լուր տարածվեցաւ, որ Գլադստոն պաշտօնապէս առաջարկեց յօդ Գրենվիլին առաջին մինիստրի պաշտօնը, կամենալով ինքը հեռանալ գործերից: Գրենվիլ իսկոյն այդ լուրը հաղորդեց յօդ Էսթրաֆֆին և ազատամիտ կուսակցութեան այլ առաջնորդներին, որոնք միասին սկսեցին համոզել Գլադստոնին հրաժարվել իր դիտաւորութիւնից: Նրանք պնդում էին, որ իրանդական և ճրանսփայի հարցերը այն դրութեան մէջ են, որ Գլադստոնի ներկայութիւնը կառավարութեան մէջ անհրաժեշտ է: Մի և նոյն ժամանակ ազատամիտ կուսակցութեան անդամները յայտնեցին, որ ներկայումս դժուար է Գլադստոնի յաջորդը գտնել: Կոմ Գերրի դեռ ևս այնքան չէ մօտեցել ազատամիտներին, որ կարողանայ մինիստրի պաշտօն ընդունել, իսկ պատերազմական մինիստր Չայլդերս, որ պէտք է փոխարինէ Գլադստոնին իրեն ֆինանսների մինիստր, սկսել է զօրքերի մէջ վերանորոգութիւններ մտնել և նրան ժամանակ պէտք է տալ այդ գործը վերջացնելու համար: Այդ համոզմունքները ազդեցին Գլադստոնի վրա և նա այլ ևս չէ կամենում հրաժարական տալ:

Ֆիլադելֆիայի մէջ տեղական անգլիական ընկերութիւնները մի ծաշկերոյթ տուին ի պատիւ անգլիական նոր դեսպան Վեստի: Ծաշկերոյթին ներկայ էր Միացեալ Նահանգների մինիստր Բէլն: Նա մի ծառ արտասանեց, որով ցանկութիւն յայտնեց, որ Անգլիայի և Միացեալ Նահանգների մէջ շատ անակից բարեկամական յարաբերութիւններ լինուհետեւ նա ասաց, թէ ինքն ներկայ է գտնուում այդ ծաշկերոյթին, որպէս զի վկայէ իր խորին յարգանքը դէպի անգլիական թագուհին: Վեստ պատասխանեց,

որ նա կաշխատի աւելի ամրացնել երկու երկրների բարեկամական յարաբերութիւնները:

Գերմանի լրագրի տեղեկութիւնների համեմատ իրանդիայի մէջ կաշխատողներին թիւը հասնում է 244-ի: Կաշխատական միութեան գանձապահ Պատրիկ Էդոն դարձեալ մի ազդարարութիւն հրատարակեց, որով հրաւիրում է ֆերմերներին չը վերել կաշխատեան աուրքը և խոստանում է նրանց ամերիկական իրանդացիների օգնութիւնը: Դուք պէտք է շարունակէք կաշիք, ասված է այդ ազդարարութեան մէջ: Կաշիք մեծ կը լինի, բայց ոչ երկարատեւ: Դուք կոչուեցնէք ամենամեծ լի բռնութիւնը, որ մարդկութիւնը երբ և ինչ համբերել է:

ՊԵՏԻ Ե ԻՐԱՐ ԶԱՆՉՆԱՆՔ

Այնքան ընդարձակ է այս նիւթն և կարի ստիպողական, որուն վրայ կրնայ խիստ շատ բան գրուիլ, բայց մենք կուզենք այժմ սահմանափակել մէկ քանի դիտողութիւններ միայն ընկելով Թրքահայոց և Ռուսահայոց նկատմամբ:

Արդ, հարկ կըլլայ նախ խոստովանել պարզապէս թէ Կ. Պօլսոյ Հայքս ընդհանրապէս հոգ տարած չենք ծաննալու զՀայաստան ոչ միայն անդրեւոյ խառնի-ծաղանձ ցեղերով, իր տեղեկագրական և փիլակաղարկան ամբողջութեամբ, իր բնական բերքերով, իր հասարակային և ընտանեկան կացութեամբ, իր գիւղատնտեսական և քաղաքակենցաղական պայմանաց մէջ, իր նիւթական և բարոյական թերութիւններով և նորա կենսական և աւելի էական պիտոյիցը նկատմամբ, այլ և չենք աշխատած ծանօթանալ և ուսումնասիրել նաեւ մեր Ռուսահայ եղբարց փիլակն, որոնց հետ բարոյական յարաբերութիւն ունենալու համար բնաւ նոյն դժուարութիւնները չեն ներկայանար մեր առջև:

Մեր այս ըստն հաստատուելու համար հարկ կը համարինք սա դիտողութիւնը ընել թէ՛ Ռուսահայոց բնակութեան տեղն անկամ այնչափ քիչ ծանօթ է մեզի, որ երբ կը լսենք Զէնգեզուր, Նուխի, Ծամախի, Լոսի և այլն հայաբնակ քաղաքաց և գաւառաց անուններն, հետաքրքրութեամբ խորտու երես կը նայինք տեղեկանալու համար թէ կովկասի ո՞ր մասին մէջ են այդ գաւառները, Կասպին ծովին, թէ Սև ծովին, և կամ Արարատ նահանգին, թէ Զէրէզկիստանի մօտ են:

Երբ ամբողջ գաւառաց անուններն անգամ այնքան խորթ կը հնչեն մեր ականջացն, ա՛յ դժուար չըլլար հասկնալ թէ ո՞րքան ծանօթ են մեզի այդ գաւառաց մէջ բնակող մեր արեւակից եղբարց ներքին կացութիւնը, մտաւոր և բարոյական դարգացման աստիճանն, ազգային յառաջդիմութեան կամ յետադիմութեան նշաններն, և բարգաւաճելու, զարգանալու, աճելու և կամ օտար տարրերու մէջ խառնուելու, նուազելու և պակսելու ապացոյցները:

Բոլոր այդ կողմերու, կովկասի, միլիտուէի և ազգայնոց փիլակն անտեղեկ ենք:

Այս բանն ո՞րչափ մեծ հարուած է մեր ընդհանուր ազգային համբաւխութեան և ինքնաճանաչութեան, մարդ կրնայ առանց դժուարութեան հասկնալ:

Տեսնենք ուրեմն թէ ինչ միջոցներով կրնանք այս միտասեր կացութեան հետեւեցնել իրար ծաննալու: Իրարու անուն իմանալու, խօսք ու բարբառն հասկնալու,

սորվելու և գաւառներու համար: Մենք այս փրկագործ նպատակին համար օգնութեանը կը դիմենք միայն այն բազմաթիւ երիտասարդաց, որք լինի և համարաբաններու մէջ ուսում առած են, և որոցմէ ոչ նուազ կը գտնուին կովկասի բոլոր հայաբնակ գաւառներն ու քաղաքները, զորոքինակ՝ ի Գերբէնտ, Բագու, Լէնքորան, Ծամախի, Նուխի, Երեւան, Գանձակ, Ախալցխա, Ախալքալաք, Ալեքսանդրոպոլ, Ղարաբաղ, Ջաքարթա, Վլադիկովկաս, Գորի, Քութայիս, Մոզդուի, Ղզլար, Նոր և Հին Նախիջևան, Բոստով, Ստափորոօլ, Արմաւիր և այլն և այլն:

Այս գաւառաց և քաղաքաց մէջ մէկուկէս միլիոն Հայ գետեղուած են, որք ունին իրենց զանազան տեղական բարբառներն, աւանգութիւնները, սովորութիւնները, բընաւորութիւնը, աւանանշայատկութիւնները, պարագմունքներն, արհեստներն, հակումները, կեանքն ու շարժումը:

Մենք ասոնց որի՞ն վրայ փոքր ի շատեւ տեղեկութիւն ունինք:

Մենք ըսելով ուրիշ բան չենք ուզեր հասկանալ, բայց եթէ Կ. Պօլսոյ մէջ հըրատարակուած բոլոր լրագրիները:

Մենք, որ պաշտօն ունինք ժողովրդեան առաջնորդ, դատարար, ուղեցոյց, դպրոց և լուսաւորող հանդիսանալու, արդեօք կը մտածենք մեր պարտաւորութիւնը խղճի մտօք կատարելու պայմաններուն վրայ. մենք ալ մէջն ըլլալով կրնենք, սոյն հարցման պատասխանը շատ գոհացուցիչ չէ:

Ի՞նչ է Հայ լրագրաց էջերու նիւթն ըստ մեծի մասին. բացառութիւնները մէկ կի առնելով կրնենք, օտար լրագրիներէ թարգմանութիւններ և վերացական ու ցամաք նիւթերու վրայ դատողութիւններ, և այլն և այլն:

Բայց միթէ կը պակսին ուրիշ հետաքրքրական նիւթեր, ուրիշ աւելի կենսական խնդիր, քան Մանկունի սրբազանի ծանուցեալ արարքներն, և քան ասոր նման հայր անգամ ըսուած և կրկնուած նիւթեր:

Ժամ է արդ ուրեմն, եթէ արդէն չէ անցած այդ ժամանակը, մեր տեսութեան, մեր հրատարակութեանց շրջանն և հորիզոնն ընդարձակելու, աւելի տարբեր իրողութեանց վրայ ուղարկութիւն դարձնելու, մեր պարտաւորութիւնը ճշդիւ կատարելու, Հայոց ազգն իրարու ծաննելու միջոցները ձեռք առնելու և վերջապէս՝ Հայ ազգին ամբողջութիւնը շօշափելու . . .

Ապաքէն, ի նկատի ունենալով մեր վրայ ծանրացող ազգային և հրապարակաօսական այս մեծ պարտաւորութիւնը, կը դիմենք խնդրելով մեր պատուարժան Ռուսահայ ձեռնհաս երիտասարդներէ, որ բարեհաճին նպատակու համար մեզի մեր այս նոր ձեռնարկութեանը մէջ, որչափ որ կարելի է, կովկասու Հայաբնակ քաղաքաց մէջ բնակող մեր սիրելի ազգայնոց փիլակն նկատմամբ մեզի հետզհետէ ընդարձակ տեղեկութիւններ հաղորդել մեր առաջադրած նպատակին համեմատ՝ զոր բացատրեցինք:

Այս միջոցաւ միայն կարելի է ծանօթանալ և ծանօթացնել Հայը Հայուն, և աւելորդ է բացատրել թէ այս բանն ո՞րքան օգտակար է և ամենակարեւոր, մանաւանդ մեզի նման ցրուած ժողովուրդի մը համար, որ պէտք է միանալ գոնէ կարծեաց և գաղափարաց ծանօթութեան միջոցաւ:

Մեր այս ազգօգուտ նպատակին անվերջ հասնելու համար կը խնդրենք յատկապէս Մշակի, Մեղուի և Պսակի պատուարժան խմբագրութիւններէն, որպէս զի քարոհաձին մեր սոյն հրաւերն ուղղեալ առ Ռու-

սահայ երիտասարդութիւնն՝ արտասպել, հանդերձ Լոյսի հասցէիւ, որ է Մինաս Գափամաճեան, Խմբագիր Տնօրէն Լ. Օյս Լանդիսի, ի Կ. Պօլսոյ, Չագմադճըլար փողոց, Արեւիկայի խան, թիւ 47:

Հուսկ ապա պարտք կը համարինք յիշեցնել մեր սոյն առաջարկութիւնն յօժարակամ կատարելու բարեհաճող զղայուն ազգայնոց թէ մենք քաղաքական նիւթերու շատ քիչ հետաքրքիր ենք. իսկ վերացական նիւթերու և ապարդիւն փիլիսոփայութեան հետաքրքիր չենք երբեք:

Ուստի ի բաց առեալ այդպիսի նիւթեր, մենք կը ցանկանք պարզապէս ստանալ լոկ տեղեկութիւններ, որ մեր համարին եղբարց ներքին փիլակն և եթ կը վերաբերին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Kölnische Zeitung» լրագիրը հաղորդում է, որ եթէ կայսրը չը համաձայնի Բիսմարկին գործելու ազատ իրաւունք տալ, վերջինը իր պաշտօնից կը հրաժարվի: Հոսմի հետ շարունակվող բանակցութիւնները դադարած են: Կայսրի և Բիսմարկի մէջ այդ հարցի վերաբերութեամբ անհամաձայնութիւններ են տիրում: Կայսրին հաճելի չէ զեսպան նշանակել պապի անձնաւորութեան մօտ: Նրան անհանգստացնում է այն հանգամանքը, որ պապը այդ զէպրում կը պահանջի պապական դեսպան նշանակել ինքնուրու իշխան Բիսմարկ անհրաժեշտ է համարում այդպէս թէ այնպէս վերջացնել բանակցութիւնները: Հոսմի հետ նա ցանկանում է, որ կայսրը իրան ազատութիւն և լրագրութիւնը շնորհի և այդ նպատակին հասնելու համար նա ամեն միջոցներ գործ է դնում, մինչև անգամ հրաժարականով է կամենում վախեցնել կայսրին:

«Առաջին հեռագրական ընկերութեանը» ինքնից հաղորդում են, որ իշխան Բիսմարկի դիտաւորութիւնն ունի հարց դարձնելու Լոստարինգիան վերջնականապէս Գերմանիայի հետ միացնելու համար, որպէս հասարակ նախագիծ: Իշխան Բիսմարկ այդ բանը անհրաժեշտ է համարում, աչքի առաջ ունենալով, որ, ինչպէս վերջին ընտրութիւնները ցոյց տուին, բողոքի կուսակցութիւնը, այսինքն այն կուսակցութիւնը, որը ցանկանում է Լոստարինգիան Զրանսիայի հետ միացնել, շատ զօրեղացել է և ազգաբնակչութիւնը կարծես զրգոված դրութեան մէջ է գտնվում:

«Presse» լրագիրը հաղորդում է, որ Բիսմարկի ներքին գործերի մինիստր Մանուէլ-Էդիմ փաշան մինիստրների խորհրդում առաջարկեց Անատոլիայի բոլոր տեղական բնակիչներին տալով մասնակցելու այդ երկրում անցկացվող երկաթուղու աշխատանքներին: Նա հիմնեց իր պահանջը մէկ հին օրէնքի վրա, որով վերջինիս ազգաբնակչութիւնը իւրաքանչիւր տարի վեց օր պարտաւոր է մասնակցել հասարակական աշխատանքներին: Այդ միջոցով կարելի կը լինէր շտապեցնել նախագիծն երկաթուղու շինութիւնը:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐՔՐՈՒՐԳ, 9 Նոյեմբերի Պետական բանկի 50% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ռ., երկրորդ 91 ռ. 75 1/2 կ., երրորդ 93 ռ. 50 կ., չորրորդ 91 ռ., հինգերորդ 90 ռ. 87 կ., ներքին 50% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 222 ռ., երկրորդ 216 ռ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը 90 ռ. 5 կ., երկրորդ 90 ռ., երրորդ 90 ռ., զոկի 7 ռ. 67 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 25,81 1/2 պէնս, ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 219 մարկ 62 1/2 պֆ.: Փարիզի վրա 271 ֆր. 25 1/2 սանտիմ:

Խմբագիր—հրատարակող ԿԻՐԿՈՐ ԱՐԵՐՈՒՆԻ